

ՆՐԵՍՈՒՆԱՆԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են  
խմբագրութիւնը տողատեղին 10 կոպէկով.  
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

## ՄՇԱԿ

Լ Ր Ա Գ Ի Ր Ը

1903 թւին

|                      |           |
|----------------------|-----------|
| 12 ամսվանը . . . . . | 10 ռուբլի |
| 11 » . . . . .       | »         |
| 10 » . . . . .       | 9 »       |
| 9 » . . . . .        | 8 »       |
| 8 » . . . . .        | 7 »       |
| 7 » . . . . .        | 6 »       |
| 6 » . . . . .        | »         |

Մնացածները ամսական 1

Եւրոպայում 30 ֆր., Ամերիկայում 6 ֆլոր.,  
Պարսկաստանում 10 ռ.  
Հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

ՌԵԴԱԿՏՈՐԱԿՆԵՐՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ թէ խա-  
ղաղութիւն. Մասնագործութիւն. Ներքին լու-  
սեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սերբիական  
անցքերը. Արտաքին լուսեր. —ԽԱՄԻ ԼՈՒ-  
ՐԵՐ. —Մանրակար. ՀնձՈՒԳԻՆԵՐ. —ՅԱՅՏԱ-  
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ կեան-  
քէն.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄ, Թէ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Սերբիական անցքերը մի մասնագործ հարուստ  
հասցրին մակեդոնական հարցին, բացառապէս  
իրանց վրա կենտրոնացնելով ամբողջ աշխարհի  
ուշադրութիւնը. ճիշդ է, առժամանակ մուսու-  
լման այդ հարցը, բայց հրապարակից չը վերա-  
ցաւ. Մակեդոնիայում արեւմտահայ ընդհարում-  
ներ դեռ տեղի են ունենում, անհաւասար  
կռիւր դեռ չարունակվում է. Իրերի դրութեան

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՅ ԿԵԱՆՔԵՆ

Վնեստիկ, յունիսի 12-ին

Պատասխան երկու տարի ետքը. —Միտիլի տեսարան մը  
Նոր Հովիտ. —Մեր հիւանդութիւնը մտնեալ է հիմա—  
նայ մը.

Իտալիա կը պատրաստուի յառաջիկայ կի-  
րակի ըստ սովորականին տօնել տարեգարծն  
իր ռաթաթուլային, հիմնադրութիւն ազգային  
միութեան Այդ մեծահանգէս տօնախմբու-  
թիւնը ինչ տարեգարծն յիշատակներ կարծես  
այս երկիրը պանդխտող հայուն մտքին մէջ.  
Յունիս 5 կը համապատասխանէ մեր մայիս  
24-ին, պատմական մեծ օրը ազգային սահմա-  
նադրութեան հաստատման Ու եղաւ ժամա-  
նակ մը, որ իտալացին ու հայը Վոսփորի վրա  
միասին կը հրճվէին մի և նոյն օրը, մէկը՝ իր  
ընդունման հասած մեծ ազգ, միւրը՝ մեծ  
ազգութեան բեկոր՝ աչքերը ապագային յոռած,  
սիրաբ յոյսերով զեղուն.

Մեր մայիս—24-ի առաջին տարեգարծին,  
1861, Պոլսոյ հայութիւնը և իտալ գաղթական  
նութիւնը մի և նոյն կիրակին ժամադիր եղած  
էին վերին Վոսփորի Հինքեար Իսկիւնէի լայ-  
նատարած դաշտին մէջ. Առտուն երիտասարդ  
եղիկակապ մը՝ Ներսէս Վարժապետեան՝ պա-  
տարագած էր Ս. Նիկողայոս ժամուն մէջ...  
Գործերը, խանդավառ ժողովրդէ մը չըլլապա-  
տեալ, կը նախագահէր հանգիստ ու սեղանին  
Եւ միջոց մը, ի զիմաց հայ ազգին այցելու-  
թեան կերթար իտալական վրանը, ուր իր  
Քրաններէն ատենաբանութեամբ կը սքան-  
չանէր խանդավառ ծնած իտալացին. Եւ յի-  
տայ հայկական վրանին մէջ կընդունէր փոխա-  
դարձ այցելութիւնը. Ինչ բարեմաղթութիւն  
ներ չը լուսնացնէ Հայաստանի համար.  
Ու հիմակ, քառասուն երկու տարի ետքը, ի-  
տալական ձայնը մայիսի օրերուն մէջ նորէն

այս վերջին ֆազիսում նկատելի է մի ուժեղ  
հոսանք. Դա պատերազմական նախապատրաս-  
տութիւններն են գլխաւորապէս Թիւրքիայի և  
մասամբ նաև Բոլշարիայի կողմից. Երկու կող-  
մերն էլ ուսումնասիրում են սահմանագծերը,  
ամրացնում են բերդերը, ուժեղացնում են  
զենքերն ու զօրքերը.

—Թիւրքական զինուորները, ասում է «Be-  
չерная Почта» լրագիրը, եռանդուն կերպով  
աշխատում են Բոլշարիայի սահմանագծում  
գտնվող Բուչինո գիւղի ամրութիւնների վրա,  
որպէս զի այդտեղից սարակոծեն Բոլշարական  
Կոչերինով գիւղը...

—Եւ Պոլսի ամենաազդեցիկ Թիւրք զինու-  
որականները, աւելացնում է Վիեննայի «Neue  
Freie Presse» թերթը, անհրաժեշտ են համա-  
րում պատերազմը... Բոլշարիան էլ Թիւրքերի  
այդպիսի տրամադրութիւնը տեսնելով, ինքն էլ  
որոշ նախապատրաստութիւններ է ձեռք ա-  
ռել...

Բայց ինչ են ներկայացնում այդ հակադիր  
ոյժերը, որոնք պատրաստվում են իրար դէմ  
կանգնելու, իրար հետ չափվելու համար.—Եր-  
կու անհաւասար մեծութիւններ.

Թիւրքիան ունի ընդամենը 2,971,500 քառ.  
կիլոմետր տարածութիւն, 24,188,600 ազգա-  
բնակչութիւն և կարող է պատերազմի դաշտը  
հանել 1,500,000 զինուոր, որոնցից մօտ 900,000-ը  
միայն Եւրոպայում \*):

Ինչ ունի դրա դէմ փոքրիկ Բոլշարիան.—  
95,706 քառ. կիլոմետր տարածութիւն,  
3,733,189 հոգուց բաղկացած ազգաբնակչու-  
թիւն և 126,970 զինուոր (պատերազմի ժամա-  
նակ): Նա հարեան պետութիւններից էլ օգնու-  
թիւն չէ կարող սպասել, որովհետեւ Սերբիան  
ընդամեն է իր ներքին գործերով, Յունաստանը  
բացարձակ բարեկամութիւն է ցայց տալիս  
Թիւրքիային, իսկ Չեռնոգորիան չափազանց  
փոքրիկ ոյժ է:

\*) «Kürschners Jahrbuch. 1903» էր. 221—223.

Կը լուսնի. բայց ոչ մեր իսկողորտ նուազե-  
րուն գուգարաբան Գեորգիան որդումով  
մաղթանքն է ի նպաստ մեզիս Միլան, ձենո-  
վա, Հոռոմ հայաւանք՝ գումարումները իրարու  
կը յաջորդեն. Բայց ուր է 1861-ի հայասիրու-  
թիւնը. Հիմակական հայասիրութիւնը տեսակ  
մը բարեկամութիւն է, այսինքն՝ գթութիւն  
Եւ գիտնալ, որ կարեկցութեան արժանի ժո-  
ղովրդները, յարգանքի անարժան կը հա-  
մարուին ժողովրդէ մը, որուն նշանաբանը ե-  
ղած է ճիւղալիս Փարա դա սէ—այսինքն՝  
ճիւղալիս իր գործը ինքը պիտի տեսնէ. Ու  
երբ տեսնուած է, որ զերմ բարեկամներ ու-  
նենայ ժողովուրդ մը, որ չէ յարգում. Կը  
անաւան, որ ազգերու կեանքին մէջ դառնու-  
թեան ժամանակներ կան, ուր ցեղ էր ինք-  
զինքը օտարներուն յարգել տալու միակ մի-  
ջոցը պէտք է՝ լուս կենսալու մէջ փնտռէ, այ-  
սինքն ինքնամիտիւն մէջ:

Մտածութիւններու տիրութիւնը քիչ մը  
փառատեցաւ տեսարանէ մը, որ իտալացի մա-  
տաղ սրտեղէ ցնծութեան աղաղակներ խելով,  
մեղի պահ մը մոռցնել տուաւ թէ այս երկ-  
րին մէջ հայը գթութեան խնդրարկու մըն է  
միայն:

Մայիս 28 հինգշաբթի օր Մուրատ-Ռափա-  
յէլեան վարժարանը Վնեստիկեան գեղութիւն-  
ներուն, երիտասարդութեանը և ուսանող պա-  
տանկութեան աչքին առջև կը փայլեցնէր հայ  
տղուն առնակորով մարմինը. Մարմնամարզի  
ընդութիւնը կը կատարուէր, կամ թէ՛ ցուցա-  
հանուէր տեղի կուէնար. Մեր հին Երեքիկներ  
իր ծաղերը իտալական Շապուրին ծաղերուն  
խառնած, կը հովանաւորէր հայ պատանեակ-  
ներուն քաջասիրտը, մինչ Վնեստիկեան նուա-  
գախումբը կը բուրդէր մարտորոտ Քամարո-  
տները, որ այստեղ պաշտօնագէտ՝ ընդունուած  
է իր մեր ազգային քաղաքը.—Վարչ նստի-  
նալը. Ու Մուրատ Ռափայէլեան աշակերտ-  
ները՝ քաջայանջ, երազաւոր, գիւրգիւղ, արա-  
գաւաղ, կը սքանչանէին բոլոր հանդիսական-

Անա այդ հանգամանքներն են, որ միշտ զըս-  
պում են Բոլշարիային և ստիպում են խոյս  
տալ պատերազմից, թէն ժողովրդի կարծիքը  
բոլորովին այլ բան է թելադրում, թէն բոլոր  
հասարակութիւնը ուզում է մի անգամ էլ չա-  
փել իր ոյժերը դարաւոր թշնամու հետ և զրա-  
նով թելադրել արեան մէջ լողացող մակեդո-  
նացիների վիճակը:

Ի հարկէ, բացի բալկանեան պետութիւննե-  
րից կան և եւրոպական մեծ պետութիւններ,  
բայց նրանցից էլ օգնութիւն չէ կարելի սպա-  
սել պատերազմի դէպքում, որովհետեւ եւրոպա-  
կան քաղաքագէտների կարծիքով մակեդոնական  
հարցը լուծվելու է խաղաղ ճանապարհով՝ բա-  
րենորդութիւնների միջոցով:

Այդ բոլորից հետևում է այն պարզ եզրա-  
կացութիւնը, թէ պատերազմը չանկան օչինչ  
չէ խոստանում Բոլշարիային Սալային նա  
Թիւրքիայի համար էլ ձեռնտու չէ կարող լինել  
նոյն իսկ յաղթութեան դէպքում:

Անա էնց դա է պատճառը, որ այդ երկու  
պետութիւնները պատերազմի նախապատրաս-  
տութիւններով միմեանց սպառնալիք տալով  
հանդերձ, աշխատում են խաղաղութիւն պահ-  
պանել. Այդ իրողութիւնը գեղեցիկ կերպով  
չեղում է «Echo des Balkans» թերթը, իր վեր-  
ջին համարում գետեղած յօդուածով՝ «Պատե-  
րազմ, թէ խաղաղութիւն»:

—Մեզանում, ասում է յօդուածագիրը, բո-  
լորն էլ հետաքրքրվում են այն հարցով, թէ  
արդեօք Բոլշարիան պատերազմույն է Թիւր-  
քիայի հետ Ամբողջ երկրորդ, ամբողջ ազգա-  
բնակչութիւնը հետևում է, թէ արդեօք ուր է  
տանելու մեզ այսպիսի քաղաքականութիւնը:

Թիւրքիայում բացարձակ ասում են, որ  
միայն պատերազմը կարող է լուծել մակեդո-  
նական հարցը և ապահովել խաղաղութիւնը  
ամենալաւի՝ 20 տարով. Այդ կարծիքն է  
Թիւրքիան, ուստի և եռանդուն կերպով շարու-  
նակում է իր նախապատրաստութիւնները և

ներքին եւ արտաքին շատ բերաններ  
հպարտութեամբ մը կընէին.

—Մեր հողուն վրա այսպէս կորովալիր առ-  
նակաւորութեամբ զարգացած տղաքը չեն ան-  
շուշտ, որ պիտի երթան անձայն անշուշտ  
մորթուիլ իրենց տարաբաղդիկ եղբայրներուն  
պէս:

Հիմակ հովը, ինչպէս կընեն, յաջող կը փչէ  
մայմական կորովի, մարմնական քաջատու-  
ղութեան պաշտպան գաղափարներուն. Երբ  
ամիս մը առաջ Մշակին՝ կը գրէի մեր ժո-  
ղովրդին առողջութիւնը խնամելու պէտքին  
վրա, չէի կարծեր թէ այս կղզիացեալ մե-  
նաւորութեան մէջէն, թաքցմանը կը հանդի-  
ւանայի հանրային կարծիքի մը, որ սկսած  
է բաւական ակներև նշաններով յայտնուիլ  
Յեղին առողջութեան խնամք տանելու մտա-  
տանքութիւնը մտքերը կամաց կամաց կը  
գրաւէ. Զէյթունի, ամբողջ Գիլիկիոյ համար  
հոգածու գտնուողները, կըթական խնդրին կը  
կցեն նաև առողջապահական տեսութիւնները  
կը կատարուին մտքի ու մարմ-  
նի համար հաւասարապէս. բարեւեղ ընկերու-  
թիւնը կը կազմուի մի և նոյն կրկնակ նպա-  
տակաւ. Եւ բան նաև, որ արտասահման  
լրագրութիւնն քաղաքական, ազգային յօ-  
դուածներուն ու վէպին ջով կը գետնէ գի-  
տական և առողջապահական տեսութիւնները  
Նոր հրապարակ ելլող լրագիր մը, ինչպէս՝  
Վառնայի «Հայաթիւրթը» երբ այս ծրագրով կը  
սկսի հրատարակուիլ, խմբագրութիւնը ան-  
շուշտ գիտէ թէ հանրային կարծիք մը նպա-  
տաւոր տրամադրեալ է ամբամիտանալ հոգա-  
տարութեան:

Եթէ բարոյապէս շատ առողջ չինք, հաւա-  
նօրէն մեր այս գծադրութիւնը մասամբ ալ  
մտրմին պատասխանատուութեամբն է. Տա-  
կաւին ճշմարտութիւն մը ըլլալէ դադարած չէ  
հիմաւոր քաղաքացիական իրաւունքի յոգի յառող-  
մարմինը:

կենտրոնացնում է իր զօրքերը մեր սահմանա-  
գլխում. Այդ պատրաստութիւնները կարելի էր  
բացատրել «Si vis pacem, para bellum» յայտնի  
առածով, բայց զգալիաբար այդպէս չէ. Կ.  
Պոլսի ամենաազդեցիկ զինուորական կուսակցու-  
թիւնը ուզում է պատերազմի մեղ հետ Եւ  
եթէ այդ հարցը նրանից կախած լինէր, այն  
ժամանակ թշնամական գործողութիւնները վա-  
ղուց արդէն սկսված կը լինէին:

Մեր ժողովուրդն էլ ազգասիրութիւնից  
չըղված՝ պատերազմը միակ եղն է համարում  
մակեդոնական խառը հարցի լուծման համար.  
Մեր զինուորականները մի րօպէ անգամ չէին  
տատանվի, որպէս զի սրբեր բաց արած Թիւր-  
քերի վրա արձակվին. Այստեղ ուշադրաւ այն  
է, որ նրանք յոյս ունեն, թէ էլ կարողանան  
յաղթանալ. Թիւրքիայի այն ոյժը, որ 25  
տարի առաջ այնքան չարհաբեց ուսաց մեծ  
կայսրութեանը Այդքան ժամանակում Թիւր-  
քական զօրքը չէ որ զգալի առաջադիմութիւն  
է արեւ գերմանացի զեկավարների չորհրդ...  
Եւ մեր զինուորականները շատ լաւ գիտեն  
այդ...

Հետևապէս Բոլշարիան չի լինի թշնամական  
գործողութիւնների նախաձեռնողը:

Իսկ Թիւրքիան, ինչ է. Պոլսի ազդեցիկ զի-  
նուորականների կարծիքի վրա աւելացնելը  
Թիւրք ամբողջ գրգռված մոլեռանդութիւնը,  
այն ժամանակ կարելի է սպասել, որ Թիւրքիան  
գլխաւորապէս պիտի վազէ դէպի հանդ պատերազմ,  
որպէս զի միանգամից վերջ դնէ իրերի ներ-  
կայ դրութեանը և ազատվի միայնապէս 180,000  
զինուոր զէնքի տակ պահելուց, որ իւրաքան-  
չեւ օր անաչին ծախսեր է պատճառում և  
նուազեցնում է Թիւրքիայի առաջը այն էլ աղ-  
քաթիկ ֆինանսները. Այդպիսի հանգամանք-  
ներում կարելի էր կարծել, թէ Թիւրքիան  
պատերազմ կը հրատարակէ:

Սակայն այդ բոլոր ձգտումները քանդվում,  
ոչնչանում են սուլթանի կամքի առաջ. Նա,

Բայց չըլլայ թէ մէկ ծայրայեղութեան միւ-  
սը մղուինք. Հոգեինս, մտքերինս, սրտերինս  
հիւանդ են, ու և է ժամանակն աւելի հիմակ  
հիւանդ են, ու դարմանումի կարօտ. Դիտուած  
է թէ պատերազմի տեսն ամենէն քաջատուղ  
բանակն անգամ, երբ ճակատամարտները եւ  
տեղեւտ կը կորսնցնէ, անա ծանր հիւանդու-  
թիւններէ կը բուռնի, մասնաւորապէս թանջէ.  
Մենք ալ յետ ետք տարուան անդադրում պար-  
տութիւններու, որոնք կը շարունակուին, բո-  
նուած ենք բարոյական թանջէ մը որ մեզի  
կը վատուցնէ, և պիտի հիւսնէ, եթէ անկողմ-  
նակալ, ցաւալիւ և ուղղամիտ մամուլ մը  
բժշկութեան հոգը վրան չառնէ:

Այդ հիւանդութիւնը կը հաստատուի մա-  
նաւորապէս այն սպաննութիւններով որոնք  
հայոց ձեռքով կը գործուին հայոց գէտ—Եւ ծա-  
նօթ հայոց գէտ—Պոլս, Եւրոպա, Հայաստան,  
Պոլկա, ամենուրեք. Այդ ոճագործութեանց  
չարժաթիւներուն վրայ հոս խօսելու տեղը չէ.  
Իրողութիւնն մըն է, որ բաւական հեռու կը  
գտնուինք—Եթէ ոչ թուաբանական թուալու-  
նով, գէթ՝ բարոյական թուալանով—այն օրե-  
րէն երբ Պոլսէն Մշակ—Ին հրճուանքով կը  
հաղորդուէր, թէ Թիւրքիոյ ոճագործութեանց  
վիճակացոյցին մէջ և ոչ իսկ մէկ հայուն մը  
նունը կը գտնուի. Պաշտպալ մը որ մեզի մեր  
երկրացի ուրիշ ցեղերուն վրայ գոնէ բարոյա-  
կան առաւելութեան մը երեկոյթը կընծայէր.  
Հիմակ, փոքր Տեառն, ոճագործութեանց հա-  
մաւարդկային վիճակացոյցին մէջ հայն ալ իր  
պատուաւոր տեղն ունի. Մենք ալ կը յառաջ-  
գիմենք:

Յետաջիւղութիւն մը սակայն որմէն շատ  
սիրայօթար հրաժարիլ պիտի ուզէինք. Տարի-  
ներէ ի վեր է որ երբ ձեռքերինս հայ կամ  
եւրոպական թերթ մը առնելու վրայ ենք, կամ  
երկրէն նամակ մը պիտի բանանք, քարեօք  
նորէն հայուն մը ոճագործութեան լուրը պի-  
տի առնենք կը հարցնենք իւրովի Հաղուա-  
ղէպ պարագայ մը չէ որ անոնց մէջ վախճած-  
նիս գտնենք:

\*\*\*

իրեն հետևանքաւ քաղաքացի, նախատեսուած է պատերազմի հետաւոր հետեւանքները և աշխատութիւնը և խաղաղութիւնը պահպանելու

Եւ իսկապէս. ոչ Բոլշակովի և ոչ էլ Թիւրքիան չեն շարժի պատերազմից. դրա ապացոյցը թիւրք-յուսակաւ պատերազմի և Թիւրքիան լաղթից յոյներին, բայց և այնպէս գիշեր Գրեմէ կղզին, որ ինքնավար մարմին դարձաւ՝ յունական լաղթիւմ թագաւորի որդու իշխանութեան տակ:

Եթէ Բոլշակովի լաղթէ, նա այնու ամենայնիւ ոչ մի ղէպընում նոր հողեր չի ստանայ, որովհետեւ Եւրոպական ուղում է պահպանել Բալկանեան թերակղզու status quo-ն:

Եթէ Թիւրքիան լաղթէ, նա դարձեալ ոչինչ չի ստանայ, որովհետեւ Թուրքաստանը թոյլ չի տայ, որ քանդի 1877—1878 թւի չինած իր գործը ինչ էլ որ լինի պատերազմի հետեւանքը, այդ մի և նոյն է, որովհետեւ Եւրոպական պէտք է լինի երկու կողմերի վիճակը որոշողը...

Այդպիսի պայմաններում պէտք է ենթադրել, որ Թիւրքիան և Բոլշակովի կը հասկանան իրանց իսկական շահերը և իրար ձեռք կը մեկնեն օրովայ չարիք դարձած հարցը լուծելու համար: Մենք հաստատ հաւատացած ենք, որ կը պահպանվի խաղաղութիւնը:

Շատ ճիշդ է բոլորական թերթի այդ եզրակացութիւնը—կը պահպանվի խաղաղութիւնը, որքան էլ որ զա հակառակ լինի մակեդոնացիներին շահերին՝ կամ ազգաւոր բոլշակովիներն ու Թիւրք զինուորականներին տեսնանք: Կը պահպանվի այժմեան զինված խաղաղութիւնը—մինչև որ ապստամբ մակեդոնացիները վերջնականապէս ուժաւորուել կը լինեն և կը դադարեցնեն—(զոնէ առ ժամանակ)—յեղափոխական շարժումը:

Իսկ դրանից յետոյ Թիւրքիան շատ լաւ գիտէ իր անելիքը. նա վաղուց արդէն փորձված է այդ գործում: Արտաքին քոյ խաղաղութեան ու բարենորոգումների անունով, իսկ ներքին հայածանք ու կեղեքում՝ յանուն կարգապահութեան—անա նրա վաղեմի նշանաբանն է. Բ.

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Ր Ո Ի Թ Ի Ե Ն

D—r Paul Rohrbach: Die Anatolische Bahn. Berlin, 1903 Գ.—Բ. Ռոհրբախ: Անատոլական երկաթուղին: Բերլին, 1903 թ.

Վերոյիշեալ աշխատութիւնը, որ սկզբում լոյս է տեսել Բերլինում պրոֆ. Դեյերիկի խմբագրութեամբ հրատարակվող «Preussische Jahrbücher» նշանաբան ամսագրում, պատկառելի է հայերի բաւական ծանօթ Բոլշակովի գրչին և որի նպատակն է ցոյց տալ, թէ ինչպէս է կատարվել Անատոլիայի երկաթուղիների ներքին զարգացումը և ինչպիսի ազդեցութիւն է գործել այդ Փոքր-Ասիայի բնակիչների անտեսական կեանքի վրա:

Այդ աշխատութեան առաջին և ամենափոքր մասը նուիրված է Անատոլիայի կամ Փոքր-Ասիայի մինչև այժմ գոյութիւն ունեցող երկաթուղային գծերի ծագման և նկարագրութեան, իսկ նրա երկրորդ և ամենամեծ մասը վերաբերում է վերև յիշված իսկական հարցի ուսումնասիրութեան: Բոլշակովի կարծիքով, անատոլիական ընկերութիւնը իր երկաթուղիներից մինչև այժմ նիւթական շատ չնչին օգուտներ է ստացել և, իբրև ապացոյց այդ բանին, նա բերում է մի շարք վիճակագրական համոզեցող թվեր: Բացի դրանից, եւրոպական ապրանքների էլ թիւ ընդամենը թիւում են ներմուծվել անատոլիական ներքին վաճառանոցները, այն էլ մեծ մասամբ նաւթ, շաքար, բամբակեայ ապրանքներ և այլն: Անատոլիական ընկերութեան երկաթուղիները նախանձելի կերպով չեն նպաստել տեղական ազգաբնակչության հարգողութեանը: Երկաթուղային գծերի մեծ մասի վրա օրեկան մի անգամ է գնացել եղել և այն էլ մարդատար ապրանքատարի հետ միասին: Միայն Չօլիս-Իզմիրի գծի մի մասի վրա գնացքները լաւ են գործել, որովհետեւ այդ գծի մասերն են գտնվում Չօլիս ազգաբնակչութեան համար ծառայող նշանաւոր ամառանոցները: Այդ գծից նախանձելի կերպով օգտվել է նոյն իսկ թիւրքաց հողագործը, որ նպատակաւոր գնելով ծախել է իր գիւղական արդիւնաբերութիւնը ամառանոցների ազգաբնակչութեանը: Յոյները, հայերը և հրէաները աւելի ինտենսիւ կերպով են օգտվում վերոյիշեալ գծից, որովհետեւ նրանք զլիաւորապէս պարապում են առևտրով, եւրոպական արդիւնաբերութեան իրերը տանում են Փոքր-Ասիայի ներքին գաւառները և շատ են նպաստում տեղական ազգաբնակչութեան կոնսումի գարգացման:

Հեղինակի կարծիքով, հայկական կոտորածները իր ժամանակին զգալի կերպով վնասել են այդ զարգացման: Այդ կոտորածներից յետոյ թիւրքաց կառավարութիւնը սխալ և վնասակար քաղաքականութիւն գործադրեց Փոքր-Ասիայում ապրող հայ հպատակների վերաբերմամբ: Գարծիւով, որ երկրի ներսից կարող են զանազան խռովարարներ մտնել մայրաքաղաքը, արգելեց և պատերից միայն բացառել ղէպերում թոյլ տալ անցադիր ստանալու այն հայերին, որոնք ցանկանում են իրանց ծննդավայրից հեռանալ և մտնել Չօլիս: Մի խոսքով, արգելեց հայերին Փոքր-Ասիայի ներքին գաւառներից առևտրական նպատակներով ճանապարհորդութիւններ կատարելու: Ղէպի պետութեան մայրաքաղաքը Շատ ճիշդ է նկատում հեղինակը, երբ ասում է, որ եւրոպացիները առհասարակ հեշտութեամբ են իրաւունք ստանում ճանապարհորդելու, որովհետեւ իրանց հիւպատոսներին հովանաւորութիւնն են վայելում, իսկ բնիկները գրեթէ չեն կարողանում տեղից շարժվել, որովհետեւ անադին գոտարութեամբ և այն էլ բացառիկ ղէպերում միայն անցադիր են ստանում: Բնիկներին են պատկանում և հայերը, որոնք տնտեսական տեսակէտից ամենանշանաւոր ֆակտոր են ներկայացնում Փոքր-Ասիայում և իրանց տեղից շարժվելու համար ստիպված են թիւրքաց պետութեան ներկայացուցիչներին կաշառելու կամ սակ մարշ միջոցներ ղրկելու: Հայերից վախճանվող ներկայ ընթիւն ամենամեծ յիմարութիւնն է և դրանով թիւրք կառավարութիւնը միայն իրան անտեսականապէս վնասում է, չեղում է Բոլշակովի, որովհետեւ անանց հայերի Թիւրքիայի առևտրը միայն սահմանափակ շափով կարող է զարգանալ:

Յոյնը, որ անտեսական տեսակէտից մի և նոյն յատկութիւններն ունի, բաւականանում է միայն Պոնտոս-Էգէյեան ափերի առևտրով, հէնց դրա համար էլ Փոքր-Ասիայի ներքում առանց հայկական տարրի ոչինչ գրելու չի գայ: Անատոլիայի մանիֆէստական ազգաբնակչութիւնը, չը նայելով իր բնաւորութեան անկասկածելի մի քանի լաւ յատկութիւններին, դեռ ևս անհամարժեք է, անտեսական չափ ընդ նախաձեռնութեան ոգի ունի, այնպէս որ չէ կարող ներպատել միտեղի առևտրի զարգացմանը: Փոքր-Ասիայի մանիֆէստական գիւղացին սիրում է հողագործութիւնը, իբրև արհեստաւոր շատ թերութիւններ ունի, իսկ իբրև վաճառական բանի պէտք չէ: Բոլշակովի կարծիքով, այդ պարզ երևում է հայերի Փոքր-Ասիայում աշխարհագրական ներկայ տարածութեամբ: Հարաւում, այն է Միջագետքում, Սիրիայում, Բաղդադում, Բարսայում շատ քիչ հայեր կան, որովհետեւ այդ տեղերի գլխաւորապէս սեմիտական ազգաբնակչութիւնը վաճառականական բաւական աչքի ընկնող յատկութիւններ ունի և կարող է վաճառականութիւնը ու արհեստագործութիւնը անկախ ու ինքնուրոյն կերպով զարգացնել, իսկ ընդհակառակն Անատոլիայի արևմտեան կողմում հայերի թիւը հետզհետեւ քաղաքում և մեծ գեր է կատարում: Եթէ Անատոլիայում հայեր չը լինէին, պէտք էր նրանց ստեղծել կամ հնարել, ասում է խորին համոզմամբ Բոլշակովի: Եւրոպական ապրանքների Միւրեղում ներմուծելը մեծ չափով զարգացնելու համար անհրաժեշտ է առևտրական ամբողջ տարրին շարժման ազատութիւն տալ, իսկ Անատոլիայի ներքին նախաձեռների և գաւառների բնակիչներին եւրոպական ապրանքներ մատակարարելու անտեսականից հայերը միակ յարմար տարրն են ներկայացնում: Եթէ թիւրքաց կառավարութիւնը աշխատէ ապագայում էլ հայերի շարժման ազատութիւնը խանգարել, դրանից անտեսական մեծ վնասներ կառավանջու. դրան իբրև լաւ ապացոյց, Բոլշակովի կարծիքով, ծառայում է այն հանգամանքը, որ հայկական կոտորածների ժամանակ Փոքր-Ասիայի վաճառականութիւնը զգալի վնասներ ստացաւ:

Բացի հայից Փոքր-Ասիայում ոչ մի ուրիշ տարր չէ վստահանում իր փողը մեծ չափով առևտրական ձեռնարկութեան մէջ դնելու, իսկ այդ բանի հետեւանք լինում է վերոյիշեալ երկրի անտեսական կեանքի քայքայումը կամ վտարարանալը: Ինչպէս իր նախընթաց աշխատութիւններում, այնպէս էլ վերոյիշեալ վերին աշխատութեան մէջ հեղինակը չեղում է, որ թիւրքաց կառավարութեան իր հպատակ հայերի վերաբերմամբ գործադրած քաղաքականութիւնը հէնց թիւրքաց շահերի տեսակէտից մի այնպիսի մեծ յիմարութիւն է, որի նմանը հազիւ թէ լինի: Արևմտեան Եւրոպայի պարտականութիւնն էլ պէտք է լինի Թիւրքիային իր այդ քաղաքականութիւնից հե-

ռու կանգնեցնել, որովհետեւ գլխաւորապէս հայերի միջնորդութեամբ են ներմուծվում եւրոպական ապրանքները Անատոլիա:

Բոլշակովի վերոյիշեալ աշխատութիւնը լաւ ընդունելութիւն գտաւ գերմանական մամուլի կողմից:

Լ. Բաբայան

Հայացիք

Նոր տարեւոյմ զրբեր.—1) Գով. Թիւ. Ս. Բաբայանը—«Բանաստեղծ-իրգայիտ Երվէր» պատկերազարդ. հատոր երկրորդ, Պետերբուրգ, 1903 էր. 1224—440. երկու հատորի գին 3 ռուբլի 2) Հ. Գեյցեր—«Համառոտութիւն Բիւզանդական Վայրների պատմութեան», գերմաներէնից թարգմանեց Մեդրոպ վարդապետ Զէր-Մովսիսեան, Վարդապետ, 1901, էր. 5+514, գին 1 ռուբլի 3) «Արտագրի Պատմութեան Հայոց ի սկզբանէ մինչ ցարալուսին հարստութիւն», գրեց Սկանակ Բանասէր: Վարդ, 1903, էր. 3, գին 4) Բենիամին Վիլլեր—«Մեծն Ալեքսանդր», պատմական կենսագրական տեսութիւն, թարգ. Վերթանէս Զաւ. Մարգարեան, Վարդապետ, 1903, էր. 166 էր. գին 50 կոպէկ 5) Լէօ—«Թաթարական Գիշեր», Թիֆլիս, 1903, էր. 82, գին 5 կոպ. 6) Հ. Նիզիլի—«Երեւելի ժողովող սիւրբ Գորգիսի պանդխտութիւնը», թարգ. Աշոտ Բալանդեան, Նուրի, 1903, էր. 26, գին 10 կոպ. 7) Լ. Յօլաթ—«Մարդու շատ հող է հարկաւոր», թարգ. Վերթանէս Զաւ. Մովսիսեան, Վարդապետ, 1903, էր. 31, գին 5 կոպ. 8) Լ. Յօլաթ—«Առտունն թէ Մամուլին», թարգ. Մամբէ վարդապետ, Վարդապետ, 1903, էր. 22, գին 3 կոպ. 9) Պարոյթի Բուսնեանց—«Մեղքն աղային Սթանեան, Բազու, էր. 31, գին 9) Լ. Նիզիլի—«Յարալայի Պատմութիւն», թարգմանեց Գ. Ս. Բազու, 1903, էր. 84, գին 30 կոպէկ 11) «War Artasches von Armenien der Besieger des Krösus? Von Gregor Chalatianz.» 12) «Бюллетень Постоянной Центральной Сескиматической Комиссии», 1902 г. «Январь—Март». СПб., 1903 г. стр. 61. 13) «Մի ար—Не плачь! армянский романс», музыка Ар. М. Туманьянца, Тифлиси, 1903, ԿՊՅՈ 60 կոպ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կովկասեան կառավարչապետի օգնական գեներալ Միրզէ յունիսի 12-ին Թիֆլիսից տեղափոխելով Կօթր ամառանոցը՝ առաջիկայ ամառային ամիսներն այնտեղ անցկացնելու համար:

Մեզ հաղորդում են, որ ուրբաթ, յունիսի 13-ին, Վերայի այգիներից մէկում, Թիֆլիսի Ներսիսեան ուսումնարանի ուսուցչական խումբը ճաշկերպութ տուեց ի պատիւ տեսուչ Ս. Բալանդեանի, որ հեռանում է իր պաշտօնից: Ծաշկերպութիւն մասնակցում էին Ներսիսեան զարդի այն բոլոր ուսուցիչները, որոնք այդ օրը գտնվում էին Թիֆլիսում, և 4 աշխարհական հոգաբարձուներ: Ուսուցիչները իրանց ձառերի մէջ միասնական զովանաւում էին տեսչի բարեխիղճ գործունէութիւնը վերջին ութ տարվայ ընթացքում և ցաւ էին յայտնում Ներսիսեան զարդից նրա հեռանալու առիթով:

«ՀԱՅԿԱՅԷ» լրագրին հաղորդում են, որ մօտ օրերումս Մուղանի անապատում զիւղական զինուորական պահապանների և մի խումբ աւազակների մէջ տեղի ունեցաւ կռիւ, որ տեսչի մի ամբողջ օր և գիշեր կարճատեւ ընդհատումներով: Հրացանագութեան ժամանակ սպանեցին աւազակներից Նէյմատ-Գեալաւա—Շաքիր-օղլի, ծանր վիրաւորված է Մէհտի-Դուլի-բէկ-Նուր-Վայրէկ-օղլի, որ մի ուրիշ աւազակ Դաւրի Բօգիւրիսանի հետ կանգնեցրել էր Անդրկովկասեան երկաթուղու ապրանքատար գնացքը: Սպանված են նաեւ աւազակների ձիաներից չորսը, իսկ մէկ ձի խված է նրանց թից: Խված են նրանցից և 3 հրացան ու բազմաթիւ փամփուշտներ: Ոստիկան պահապանների կողմից թիւթ վէճ է ստացել պահակախմբի ղեկավար Հալալիս:

Պետական խորհուրդը, ընկելով անանաբուժական նոր օրէնքի նախագիծը, ուղարկութիւն դարձրեց այն հանգամանքի վրա, որ ներկայումս ոստիկանական-անաւաբուժական հիւղութեան ենթարկվում են միայն եղջիւրաւոր անասունները, իսկ ձիերը, որոնք պաւկա գեր չեն կատարում վարակիչ հիւանդութիւններ տարածելու գործում, քան եղջիւրաւոր անասունները, ազատ են բոլորովին հսկողութիւնից: Այս պատճառով պետական խորհուրդը յանձնարարեց ներքին գործերի մի-նիստերի ներկայացնել մի նախագիծ ձիերի վրա ոստիկանական-անաւաբուժական հսկողութիւն սահմանելու և առևտուրի ձիերը կառավարական առանձին տուրք ենթարկելու մասին այն հիմունքներով, որոնցով այդ տուրքը սահմանված է եղջիւրաւոր անասունների համար:

Կարճ ժամանակից յետոյ Կովկաս կայցելեն 150 հօգի անգլիացի տուրիստներ՝ մեր երկրի նշանաւոր տեղերը տեսնելու համար: Տուրիստները, ի միջի այլոց, կայցելեն նաեւ Թիֆլիս, ուր կը մնան մի քանի օր:

Թիֆլիսի բէալական ուսումնարանում այս տարի իրանց ուսման ընթացքն աւարտեցին 30 աշակերտներ, որոնցից 8-ը՝ հայ, 14-ը՝ ռուս, 6-ը՝ վրացի և 2-ը՝ գերմանացի:

ՄՈՎՍԷՍ ԳԻՂԻՑ (Ղազարի գաւառ) մեղ գրում են. «Ամսիս երկուսին տեղացի սաստիկ փոթորիկաւան կարկուտ և ոչնչացրեց Մովսէս Գիւղի այգիների մի մասը. կարկուտ սաստիկութիւնից՝ այգիներում կանաչի նշան անգամ չէ մնացել. վաղերի կոնդներն են միայն մնացել: Վնասը մեծ է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՆՐԻՔԻՆ ԱՆՔԵՐԸ

Արտասահմանեան ժուրնալիստները առիթը բաց չը թողին տեսակցելու և խօսակցելու սերբիական պատգամաւորութեան հետ, երբ նա գնում էր Բէլգրադից Ժրնէվ: Անա թէ ինչ է հաղորդում «Berliner Tageblatt» լրագրի Բուդապէշտի թղթակիցը:

«Ուրբաթ օր Բուդապէշտի վրայով անցաւ սկուպչինայի և սենատի պատգամաւորութիւնը, որ բաղկացած է 28 անդամներից. դրանից յետոյ ապաւում է Բէլգրադ քաղաքի պատգամաւորութիւնը, որ բաղկացած է 30 անդամներից: Այդ վերջին պատգամաւորութիւնը կընդունվի Պետր թագաւորի կողմից Վիեննայում: Բէլգրադում մեծ պատարագութիւններ են տեսնվում թագաւորին դիմաւորելու համար. թագաւորութեան օրը դեռ ևս չէ նշանակված: Պատգամաւորութեան զուլիսը, սենատի նախագահ Վիլիմիւրովիչ, հաղորդեց ինձ, որ Սերբիայում կատարեալ հանգստութիւն է տիրում, ամբողջ երկիրը շտապում է դիմաւորելու թագաւորին: Սկուպչինայի փոխնախագահ Ռիբարաց հաղորդեց թղթակցին, որ հեռագիրները Պետերբուրգից և Վիեննայից ամենալաւ տպաւորութիւն գործեցին Բէլգրադում: Ապա թղթակցից հարցրեց, թէ ինչ կեւր Սերբիան կարող է բաւարարութիւն տալ օտար կառավարութիւններին մայիսի 29-ի դաւադրութեան մասնակցող օֆիցերներին պատժելու մասին:

—Սկուպչինայ, —պատասխանեց Ռիբարաց, —որ ներկայացնում է ժողովրդի կամքը, արդարացի բոլոր օֆիցերներին Դրա մասին որոշում կայացած է: Այդ պատճառով ես կաւծում եմ, որ այդպիսի որոշումից յետոյ դրանց ղէմ ոչ մի հաւածանք սկսել չէ կարելի: Դա անարդարութիւն ևս կը լինէր, որովհետեւ դաւադրութեան մէջ մասնակցող օֆիցերները կատարում էին միայն ժողովրդի կամքը: Հէնց այդ պատճառով էլ սկուպչինայ նրանց վերաբերմամբ առանձին որոշում կայացրեց:

—Ծիջդ է, որ այժմ Սերբիայում նոր կուսակցութիւն է կազմվում:

—Նոր բեժիւր, —պատասխանեց Ռիբարաց, —խախտեց և մինչև անգամ քարոզանք արեց կուսակցական նախկին բաժանմունքները: Շատ հաւանական է, որ այժմ կը կազմվին նոր կուսակցութիւններ: Նախ և առաջ, ես կարծում եմ, կը կազմվի մեծ ժողովրդական կուսակցութիւն, որի կազմակերպութեան մէջ ես ինքս մասնակցում եմ: Այդ կուսակցութիւնը նախագծում է բոլոր ազատ տարրերի միասնութիւնը: այնքան այնպիսիներին, որոնք արատաւորված չէին նախկին ընթիւն ժամանակի եւս յոյս ունեն, որ բոլոր լուրջ մարդիկ կը մտնեն այդ նոր կուսակցութեան մէջ: Մենք յոյս ունենք Բէլգրադ նոր վերադարձած Պաշիկ և Վուլիի վրա:

Սերբիական առևտրի մինիստր Գէնչիչ հաղորդեց «Berliner Lokal Anzeiger» լրագրի թղթակցին հետեւալ մանրամասնութիւնները: Բարսափելի ողբերգութիւնից առաջ տեղի ունեցած փորձերի մասին, որ արեցին սերբիական օֆիցերները, որպէս զի Դրաւա թագաւոր հու եղբայր սերբիական թագաւորանոց չը յայտարարվի:

Գէնչիչ սերբիական ներքին գործերի մի-նիստ էր այն ժամանակ, երբ Ալեքսանդր թագաւորը մտադրվեց պատկզլ Դրաւա Մաշինայի հետ: Գէնչիչ աղաչում էր թագաւորին չամուսնանալ Դրաւայի հետ, բայց թագաւորը անյողորդ չմտաւ, և Գէնչիչ հրաժարական տուեց: Ապա նա 9 ամիս քանաւ նստեց:



Электронпечатня Груз. Изд. Т-ва, Б.Давидская ул.